

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օսմանա-պարսկական դավթիչների դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարը դարերի պատմություն ունի։ Մ. Գ. Ներսիսյանի գրախոսվող աշխատությունը* ընդգրկում է այդ հերոսական պայքարի միայն մեկ—երկու տասնամյակը։ Վերջնելով ավելի կարճ, սակայն դեպքերով հարուստ ժամանակաշրջան, հեղինակը արխիվային նյութերի և բազմաթիվ աղբյուրների հիման վրա զնահատելի աշխատանք է կատարել ստեղծելու մի հաջողված մենագրություն 1850—1870 թվականներին սուլթանական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմության վերաբերյալ։

Աշխատության նախաբանում հեղինակը ընթերցողին ներկայացնում է Պյուրբական ավերիչ արշավանքներն ու նվաճումները, պարսկա-օսմանական պատերազմները, թյուրքական բիրտ, հետամնաց կարգերը, վարչական և քննակազմական դաժան քաղաքականությունը, օսմանյան կայսրության դեմ աքի ելած հույն, սլավոն և հայ ժողովուրդների պայքարը։

Մենագրության առաջին գլխում նկարագրվում է Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 1850—1870-ական թվականներին։ Հեղինակը ճշմարտացի տեսնում է երկու Հայաստան՝ Արևելյան, որտեղ հայ բնակչությունը ազատված էր ֆիզիկական բնաջնջումից, բռնել էր տնտեսության դարգացման կապիտալիստական ուղին, որտեղ, սակայն, առկա էր ցարիզմի դաժան քաղաքականությունը, և Արևմտյան Հայաստան, որտեղ տնտեսությունն

ապրում էր դեգրադացիա, իշխում էր թյուրքական դեսպոտիզմն ու միջնադարյան խավարը և հայ ժողովուրդը եմթարկվում էր ֆիզիկական բնաջնջման։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո ստեղծվեցին անհամեմատ ապահով վիճակ ժողովրդի ֆիզիկական գոյություն, ինչպես նաև բարենպաստ պայմաններ՝ երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման համար։ Գրքում բերված վիճակագրական տվյալներից երևում է, որ Արևելյան Հայաստանի բնակչության թիվը 1831 թվականին կազմել է 161.747 մարդ, իսկ 1914 թվականին հասել է 1.014.235-ի։ Այսպիսով, 83 տարվա ընթացքում բնակչության թիվն աճել է 5,3 անգամ։ Այլ էր պատկերը Արևմտյան Հայաստանում։ 1870 թվականին թյուրքիայում հաշվվում էին 3 միլիոնից ավելի հայեր, որոնք համարյա ամբողջովին բնաջնջվեցին ու տեղահանվեցին։ Բերված թվերն ու փաստերը ընթերցողի առջև վերակենդանացնում են այն ծանր իրավական-տնտեսական վիճակը, որ գոյություն ունեւր Արևմտյան Հայաստանում։

Սակայն սուլթանական թյուրքիայում միայն հայերը չէին, որ ենթարկվում էին ազգային ճնշման։ Ֆեոդալները շահագործում էին նաև թյուրք և բուրդ աշխատավորներին, որը չի անտեսվել հեղինակի կողմից. «Անասելի շահագործման ու բարբարոս ճնշումների էին ենթարկվում հայ գյուղացու հետ միասին նաև բուրդ և թյուրք աշխատավոր մասսաները» (էջ 57)։

Ազգային ճնշումներն ու հալածանքներն ավելի խստացան ու դաժան կերպարանք ստացան 19-րդ դարում։ Կ. Մարքսը 1853 թվականին հրատարա-

կած՝ «Ազգությունները թյուրքիայում» հոդվածում նշում է այն ծանր հալածանքներն ու ճնշումները, որոնց ենթարկվում էին սլավոն, հույն, ալբան, ռուսին և հայ ժողովուրդները։

Թյուրք սահմիլյատորները դարեր շարունակ խոչտանգում, բռնադատում, ունչացնում էին հայերին, վրացիներին, քրդերին, սլավոնական և հույն ժողովուրդներին։

Օտար պետությունների «միջնորդություն» թյուրքական կառավարության կողմից ձեռնարկված բարենորոգումները չփոխեցին տիրող դրությունը։ Հայ ժողովուրդը լուրջամբ չէր տանում ծանր շահագործումն ու հալածանքը։ Նա հաճախ հանդես էր գալիս թյուրքական բեգերի ու շահագործողների, սուլթանական վայրագ կարգի դեմ։ Արևմտյան Հայաստանում, ինչպես ճիշտ նկատել է հեղինակը, հակաֆեոդալական պայքարը միաժամանակ ստանում է ազգային-ազատագրական պայքարի երանգ։ Թյուրքահայությունն աշխատում էր առաջին հերթին թոթափել սուլթանիզմի լուծը, միանալ արևելահայերին և ստեղծել անհրաժեշտ պայմաններ երկրի տնտեսական զարգացման համար։ «Այսպիսով, ազգային ազատագրության հարցը, որը, անշուշտ, ունեւր նաև սոցիալական խոր արմատներ, առաջնահերթ և հիմնական հարցերից մեկն էր Արևմտյան Հայաստանում» (էջ 99)։

Աշխատության հիմնական հարցը դարձնելով սուլթանական բռնակալության դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումները, հեղինակը առատ նյութի ու փաստերի հիման վրա ընթերցողին պատմում է ազգային-ազատագրական մի շարք շարժումների ու ժողովրդական ապստամբությունների

մասին։ Այդ ապստամբություններից աչքի են ընկել և ժողովրդի ազատագրության ու համակրանքին արժանացել Զեյթունի և Վանի 1862 թվականի ապստամբությունները։ Ընթերցողը տեսնում է, թե ինչ փառահեղ ուղի են անցել զեյթունցիները թյուրքական բռնակալության դեմ մղած հերոսական կռիվներում։ Հեղինակը, հանգամանորեն վերլուծելով Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը, նոր նյութերի հիման վրա ցույց է տալիս այն կապերը, որ ունեցել են ռևոլյուցիոն-դեմոկրատները Զեյթունի ապստամբների հետ, Միքայել Նալբանդյանի ու նրա զինակիցների զենք այդ շարժումների ժամանակ։ Բերված փաստերից հեղինակը եզրակացնում է, որ Պոլսի հայ ռևոլյուցիոն-դեմոկրատական խումբը, որը ոգեշնչված էր Մ. Նալբանդյանով և անմիջապես կապված էր նրա հետ, մեծ հույսեր էր կապում Լոնդոնի ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատական խմբի հետ և ձգտում էր ոչ միայն գաղափարական ղեկավարության, այլև օգնություն էր պահանջում ազգային-ազատագրական շարժումը հաղթականորեն պսակելու համար։ Բերված նյութերը մեկ անգամ ևս վկայում են այն սերտ կապերի մասին, որ ունեցել են Մ. Նալբանդյանը և Պոլսի ռևոլյուցիոն-դեմոկրատները Գեղեցնի, Օզարյովի և այլ ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների հետ։

Ազգային ազատագրական շարժումներով տոգորված էր նաև հայ ինտելիգենցիան, որը դրչի հետ միասին զենք վիճեցնում սուլթանիզմի լծից հայ աշխատավորությանը ազատագրելու համար։ Աշխատության մեջ մենք հանդիպում ենք 19-րդ դարի կեսերին Հայաստանում կազմակերպված ազգային-ազատագրական խմբակների գործունեության վերաբերյալ բազմաթիվ նոր փաստերի։ Խմբակների աշխատանքի հիմքում դրված էր ժողովրդի ազատագրումը սուլթանիզմի լծից, հայ ժողովրդի միավորումը Ռուսաստանի հովանավորության տակ։ Առանձին վայրերում ազգային-ազատագրական խմբակների մեջ ընդգրկվում են արդեն

արհեստավորները և գյուղացիները։ Այդ տեսակետից բնորոշ է էրզրումի խմբակի գործունեությունը։

Գրախոսվող գրքում հատուկ տեղ է հատկացված ռուս-թյուրքական պատերազմների ժամանակ ծավալված հայ-ազատագրական շարժումներին, երբ արևմտահայությունը նոր, բարենպաստ պայմաններ էր տեսնում սուլթանական լծից ազատագրվելու համար։ Դեռ 1828—29 թվականներին՝ ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ, հարյուրավոր հայ կամավորներ խմբեր են կազմում ռուսական զորքի հաղթանակն ապահովելու համար։ Ծառ վայրերում բնակչությունը զինվում և սրտատրոփ սպասում է ռուսական զորքերին։ Ասորիների պատրիարքը 1855 թվականին գեներալ Բեյբութովին ուղարկած նամակներից մեկում գրում է. «Ինչպես հայերը, այնպես էլ քրդերը սպասում են ռուսական զորքերի երևան գալուն մեր սահմանի վրա, որպեսզի միանան նրանց հետ»։

1855 թվականին Թիֆլիսի աշխարհագրականների թիվը կազմում էր 6.158 մարդ, որոնց մեջ կային հայեր, ռուսներ, վրացիներ, ադրբեջանցիներ, լեռնական, վրացական և ադրբեջանական կամավորական ջոկատներ ու վաշտեր են կազմվում նաև 1877—78 թվականների ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ։ Բազմաթիվ փաստերով ցույց է տրված հայերի մասսայական գաղթը թյուրքիայից դեպի ռուսական տիրապետության շրջանները, որտեղ նրանց համար ստեղծում էին պայմաններ ապահով կյանքի ու զարգացման համար։

Հեղինակը ճիշտ է նկատել, որ հայ-ազատագրական շարժումների մեջ հանդես էին եկել երկու հիմնական դասակարգեր՝ բուրժուազիան, որն աշխատում էր ազատագրական շարժումները օգտագործել հայկական բուրժուական պետության կամ ավտոնոմիայի ստեղծման, իր տիրապետության հաստատման համար, դեմ էր ժողովրդական ապստամբություններին ու ձգտում էր խաղաղ բանակցություններ

ների միջոցով ստանալ որոշ իրավունքներ, և գյուղացիությունը, որը պատրաստ էր արյան գնով ազատություն ձեռք բերել։ «Մրան համապատասխան էլ ազատագրական շարժումն ունեցավ երկու գլխավոր հոսանք՝ «Գյուղացիական-դեմոկրատական» և բուրժուա-նացիոնալիստական» (էջ 258)։ Բնութագրելով այդ երկու դասակարգերի դերը ազատագրական շարժման մեջ, հեղինակը, մեր կարծիքով, որոշ չափով նսեմացնում է բուրժուազիայի պրոգրեսիվ դերը, դիտելով նրան միայն նացիոնալիզմի շրջանակների մեջ։ Այստեղ տեղին է հիշեցնել հայկական հուզումների կապակցությամբ Վ. Ի. Լենինի «Ուլիշի դրոշակի տակ» նշանավոր հոդվածը, որտեղ ուղղակի ցուցում կա այն մասին, որ Հունաստանի դեմ թյուրքիայի 1896—97 թվականների պատերազմի և հայկական հուզումների ժամանակ «պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունն են եղել ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության զեղաձգումները» (Երկեր, հատ. 21, էջ 175)։

Հաջող են գրքի նաև այն էջերը, որտեղ տրված է ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժման ներկայացուցիչների բնութագրությունը։ Այստեղ արդեն տեսնում ենք այն օղակները և կապը, որոնք կազմում են այդ շարժման շրջան, մի բան, որ, պետք է խոստովանել, մինչև վերջին շրջանը մենք չէինք տեսնում։ Գյուղացիական ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժման պայծառ ներկայացուցիչն ու ղեկավարը Միքայել Նալբանդյանն է, որն իր համախոհների և զինակիցների միջոցով այն գործունեություն է ծավալում և հսկայական ջանքեր է թափում, որպեսզի հայ ժողովրդի ազատագրական շարժումները շաղկապի Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժման հետ։ Հեղինակը չի մոռացել նաև 19-րդ դարի մի շարք նշանավոր դեմքերին ու գրողներին։ Մարքսիզմի դիրքերից են զնահատված

* Մ. Գ. Ներսիսյան, «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնակալության դեմ», Երևան, 1955։